**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 25.06.2018թ.
ժամը 15 [30] -ին

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
-ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
-ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը նիստից բացակայում է,
-ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա.Բաղրամյան)

1. ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ստացված գրությունը քննարկելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**1. ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ստացված գրությունը քննարկելու մասին.**

---

(Ա.Բաղրամյան)

1.1 Գնահատող հանձնաժողովը քննարկեց ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ստացված գրությունը՝ կապված Բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը դատական կարգով վիճարկելու վերաբերյալ, և որոշեց.

- Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 17.04.2018թ. N 5 Արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումները «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:
- «Մաժէվ» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնելու որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին**

---

(Ա.Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**Գնահատող, (ԳԱՊ)** Տ. Մաթևոսյան

**Գնահատող,** Ռ. Զադոյան

**Գնահատող** Խ. Երիցյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումները համակարգող՝** Ա. Բաղրամյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.06.2018թ.
ժամը 11 00

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զաքոյան,
-ՀՀ ՁՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
-ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը նիստից բացակայում է,
-ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. 07.05.18թ. N 6 արձանագրությամբ կայացրած որոշումները քննարկելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Մաժէվ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**2. 07.05.18թ. N 6 արձանագրությամբ կայացրած որոշումները քննարկելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

2.1 Քանի որ 07.05.18թ. N 7 արձանագրությամբ Ա/Ձ Վրեժ Ղազարյանի կողմից ներկայացրած բողոքի (ԳԲԽ-ԱՄ-2018/60 ծածկագիր) պատճառով կասեցվել էր գնման գործընթացը՝ այդ թվում նաև 07.05.18թ. N 6 արձանագրությամբ կայացրած որոշումները, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանանչել՝ 5-րդ չափաբաժնում **«Նարնիկ» ՍՊԸ**-ին և 54-րդ չափաբաժնում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ին և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել **«Նարնիկ» ՍՊԸ**-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Միաժամանակ քանի որ **«Յուտեկ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված 37-րդ չափաբաժնի մասով ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում՝ տեխնիկական բնութագրում առկա էր անհամապատասխանություն (նշված էր կամ համարժեք բառը), գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը (այսուհետև Կարգ)՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա.Բաղրամյան)

3.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**Գնահատող, (ԳԱՊ)** Տ. Մաթևոսյան

**Գնահատող,** Դ. Զադոյան

**Գնահատող** Ս. Երիցյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումները համակարգող՝** Ա. Բաղրամյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
# ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06.07.2018թ.
ժամը 12 [30]

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զաքոյան,
-ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
-ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
-ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1. **«Յուտեկ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի անհամապատասխանության շտկումը քննարկելու մասին.
2. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**1. «Յուտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի անհամապատասխանության շտկումը քննարկելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1.1 Սահմանված ժամկետում **«Յուտեկ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեց որակավորման փաստաթղթերի անհամապատասխանության շտկումը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**2. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Նարնիկ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն **«Նարնիկ» ՍՊԸ**-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված 54-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում արտադրության տարեթիվը նշված չէ: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը (այսուհետև Կարգ)՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**09.07.2018թ-ին** գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեց որակավորման փաստաթղթերի անհամապատասխանության շտկումը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից:

2.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1, 9, 11, 25, 27, 28, 32, 33, 37, 38, 39, 41, 45, 46, 47, 48, 52, 59, 60, 61 և 62-րդ չափաբաժիններում **«Յուտեկ» ՍՊԸ**-ն, 20, 21, 22, 23 և 58-րդ չափաբաժիններում **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ն, 18, 66, 68 և 69-րդ չափաբաժիններում **«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ**-ն, 12, 24, 26, 64, և 65-րդ չափաբաժիններում **«Էրոդավ» ՍՊԸ**-ն, 19, 35, 36, 40, 42, 43, 44, 50, 51-րդ չափաբաժիններում **«Հեեի Ռադիո» ՍՊԸ**-ն, 6, 7, 8, 10, 53 և 55-րդ չափաբաժիններում **«Մաժէվ» ՍՊԸ**-ն, 31 և 54-րդ չափաբաժնում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ն, 5-րդ չափաբաժնում **«Նարնիկ» ՍՊԸ**-ն, 29-րդ չափաբաժնում **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ն, 30-րդ չափաբաժնում **«Վարբադ» ՍՊԸ**-ն, 34 և 49-րդ չափաբաժնում **«Տուպազ-95» ՍՊԸ**-ն, 67-րդ չափաբաժնում **«Վարմէքս» ՍՊԸ**-ն, 17-րդ չափաբաժնում **«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ**-ն, 16-րդ չափաբաժնում **«Միկրորինգ» ՍՊԸ**-ն, 63-րդ չափաբաժնում **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ**-ն և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

2.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:**

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Բաղրամյան)

3.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| **Գնահատող, (ԳԱՊ)** | Տ. Մաթևոսյան |
| **Գնահատող,** | Ռ. Զադոյան |
| **Գնահատող** | Խ. Երիցյան |
| **Գնահատող** | Հ. Բարսեղյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Բաղրամյան |